



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N^o-113

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի երրորդ մասի 1-ին և 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մինչև 01.01.2008 թվականը ներկայացված վերաքննիչ բողոքներով, ինչպես նաև նախորդ տարվանից փոխանցված գործերով Վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշումներ է կայացնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի հիման վրա: Նշված գործերի քննությունն իրականացվում է այնպես, որ մինչև 2008 թվականի հունվարի մեկը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի շրջանակներում ապահովվի կողմերի իրենց գործով վերաքննություն ստանալու իրավունքը:

Մինչև 01.01.2008 թվականը Վճռաբեկ դատարանի կողմից բեկանված դատական ակտերով գործերն ընդդատության կանոնների համաձայն՝ փոխանցվում են համապատասխան դատարան:

Մինչև 01.01.2008 թվականը Վճռաբեկ դատարանի կողմից բեկանված և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարույթում գտնվող վարչական գործերը (գործեր, որոնք իրենց մեջ չեն ներառում քաղաքացիական դատարանին ընդդատյա որևէ

պահանջ) փոխանցվում են Վարչական դատարան, որտեղ գործի քննությունն իրականացվում է վերաքննիչ վարույթի կանոններով:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում առկա առանց քննության թողնված և կասեցված գործերը, գործի քննությունը վերսկսելու դեպքում, քննվում են սույն կետի առաջին պարբերության կանոնների համաձայն:

2. Տնտեսական դատարանի 15-օրյա ժամկետում բողոքարկման ենթակա դատական ակտերով բողոքները ներկայացվում են Վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Տնտեսական դատարանի այն վճիռները, որոնք թեև 01.01.2008թ. դրությամբ օրինական ուժի մեջ են մտել, սակայն չի լրացել դրանց՝ Վճռաբեկ դատարան բողոքարկման համար նախկինում սահմանված վեցամսյա ժամկետը, կարող են բողոքարկվել վեցամսյա ժամկետում Վերաքննիչ քաղաքացիական դատարան:

3. Տնտեսական դատարանի կողմից կայացված վճիռներով լրացուցիչ վճիռ կայացնելու, վճռի պարզաբանում տալու, վճռում թույլ տրված վրիպակները և սխալներն ուղղելու և կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումները ներկայացվում են Դատական դեպարտամենտ, որտեղից ըստ ընդդատության կանոնների, այդ դիմումները դատական գործի հետ միասին ուղարկվում են համապատասխան դատարան՝ դատավարական գործողություններ կատարելու համար:

Տնտեսական դատարանի վճիռների օրինական ուժ ստանալու վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինը:

4. Այն կասեցված գործերը, որոնք չեն պատկանում տվյալ դատարանի առարկայական ընդդատությանը, բացառությամբ վարչական գործերի, ուղարկվում են ըստ առարկայական ընդդատության:

Կասեցված վարչական գործերը պահվում են գործը քննած ընդհանուր իրավասության դատարանում: Գործը քննած դատավորի կողմից քննությունը վերսկսվում և շարունակվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ

հողվածի 1-ին մասի համաձայն: Կասեցված գործը քննած դատավորի բացակայության դեպքում գործը փոխանցվում է Վարչական դատարան:

Առաջին ատյանի դատարաններում առկա առանց քննության թողնված քաղաքացիական և վարչական գործերը պահվում են տվյալ դատարանի արխիվում: Նշված գործերի վարույթը վերսկսելու նպատակով հայցվորի (դիմողի) դիմումը ստանալու դեպքում գործերը դիմումի հետ ուղարկվում են ըստ ընդդատության՝ համապատասխան դատարան:

5. Այն դեպքերում, երբ դատարան ներկայացված հայցադիմումն իր մեջ պարունակում է քաղաքացիական, ընդհանուր իրավասության և վարչական դատարանների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ, ապա քաղաքացիական գործեր քննող դատարանը հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին) որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին որում պարզաբանում է, թե պահանջի որ մասն է իրեն ընդդատյա և որը՝ ոչ:

Վարչական դատարանում քաղաքացիական և վարչական դատարանների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ պարունակող հայցադիմում ստանալու դեպքում դատարանը հայցադիմումն ընդունում է միայն վարչական դատարանին ընդդատյա մասով: Մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժվում է՝ հիմք ընդունելով Վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման մեջ դատարանը պարզաբանում է, թե պահանջը որ դատարանին է ընդդատյա:

**Հայաստանի Հանրապետության
վճռաբեկ դատարանի նախագահ**

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

2008թ. փետրվարի 11
ք. Երևան